




ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուշկարիոյ համար տարեկան 10 ֆր.
» » վեցամսեայ 5 »
Արտատահմանի համար տարեկ. 12 »
» » վեցամսեայ 6 »
Վ. ՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԻՒԿ

Նամակ, ծրար եւ այլ պէտքեր ղրկել հետեւեալ հասցեով
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և խորագիր ՏԱՐԻՈՒ շաբաթաթերթի

Х. Чакрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅԾԱՆԻՔ

Խորագրութեան եկած գրութիւնք կը
հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ:
Հրատարակուած ու չը հրատարակուած
ձեռագիրներ եւ չեն տրուիր:
Դանուցման սուղը 20 անթ. Երեքէն
աւելի անգամներու համար զատ սակարկութիւն:
Դանուցմունք կ'ընդունուին ամէն ժամ:

Ս. ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 26 ՄԱՅԻՍ 1898

ԹԻԻ 15

ԼԵՌԱՆ ՄԱՐԳԸ

Շիսակ Բանակն է որ ուղիղ կը գծէ

Մենք՝ թէ՛ «կատակ» ու թէ՛ «Տաւրոս» ու բաւական երկար ըզբաղուեցանք յեղափոխական ենք ըսող ու պարօնեցող կարգ մը կեդրոնական ու չը կեդրոնական ասոնքիչաներու արարքներովը. մեր միակ նպատակն էր, արտաքուստ փայլուն ու պսպղուն երեւցող, ծեփուած չէնքին մէջ ծածկուած աղտոտութիւններն ու կեղտոտութիւնները երեւան բերել, և իրենց զաւրալի գոյներով ժողովուրդին ցոյց տալ, ժողովուրդին՝ որ միամտաբար անոր արտաքին տեսքէն հրապուրեալ՝ մոլորաբայլ կ'առաջնորդուէր դէպի անդունդը, ուստի պէտք էր քանդել, պէտք էր կործանել ապականութեանց ամբարտակը, գործը պղտիկ չէր, հետեւաբար անով զբաղուիլն ալ կարճ ժամանակի մէջ կարելի չէր կրնար լինել, և այս պատճառաւ ահա՛ մեր զբաղմունքն ալ երկար տեսց:

Մեզուորը՝ ինքը ժողովուրդն է, քանի որ ինքը ժողովուրդը միամտաբար կը ցատաբաւ հոսանքէ հոսանք, ու կը հետեւի անոր, կը սայթաքի ու կը փայթախի ծուռ շաղկենքով մէջ, անդի կուտայ զինքը ըստուորելու համար ուղիղ ճանապարհը ցոյց տուող անկեղծ աշխատանքներուն երկար, շատ երկար չարչարուելուն:

Մենք՝ ի սկզբան բացարձակապէս յայտարարեցինք, չըսինք թէ ծեփին վրայ նկարներ պիտի նախշենք, չըսինք թէ անուշ և հաճելի չղուքով թուիւններով ասոր անոր խնկարկութիւններ պիտի ընենք, չըսինք և չենք ալ ըսեր որ ծուռ ճանապարհով, ծուռ գիծերով Հալապտան պիտի տանինք, ալ տապար ու բրիչ ձեռքերնիս պիտի քանդենք, պիտի կործանենք ապականութեան վայրերը, որպէսզի ինքը՝ ժողովուրդը, բաց աչք տեսնէ

և հասկնայ իր կոյր յափշտակութեան աղտոտութիւնները, 50,000 ուրբեր, 300,000 ի զուր և վայրապար զոհեր, 2 1/2 միլիոն տաճկահայ ժողովուրդի սրտամորմէք թշուառութիւնը, և եւս առաւել յեղափոխական սուրբ և նուիրական գործին անկերպարան եւ անստուգութեան մէջ թաղուիլը:

Այսօր, որպէս հետեւանք մեր կծու քննադատութեանց, եւ իբր հետեւանք մեր տապարի ու բրիչ վարդապետութեան, ուրախ ենք տեսնելով որ, ինքը ժողովուրդը, մեծ մասամբ, սթափելով իր մութ ու խաւար գնացքին մէջ, կը տեսնէ յեղափոխութեան սուրբ անուան տակ ծածկուած՝ զինքը անդունդէ անդունդ առաջնորդող գաճաճները, միթիթարական է սոյն տեսարան եւ յուսալից գէթ ասկէ ետքը:

Նոր օր, նոր յոյս, նոր հաւատք եւ նոր գործ: Ինչպէս ըսած ենք շատ անգամ՝ եւ մեր գոռում՝ գոռումներով ապացուցած ենք թէ՛ տառանց մարդը յեղափոխութեան չը կայ յառաջդիմութիւն, չի կայ փրկութիւն, ոչ միայն հայրենիքի եւ ազգի փրկութեան համար, այլ եւ ամէն բանի մէջ, ամէն արուեստի եւ ճիւղի մէջ, ըլլայ կրօնական, ըլլայ աշխարհային, յեղափոխութիւնն է որ կը սանձէ մարդկանց վայրենութիւնը, յեղափոխութիւնն է որ կը ջախջախէ բռնութեան եւ բռնապետութեան կապանքները, յեղափոխութիւնն է, որ կը հարթէ անաւանական պողտան, կը կտաւրեւորէ արուեստները եւ գիտութիւնը. մէկ խօսքով, յեղափոխութիւնն է, որ ընկերական աշխարհը կը բարեզարդէ եւ մարդկութիւնը կը մտնեցնէ դահլիճի եւ երջանկութեան:

Առանց ալեաց ծովը ու Ռփկէանը հոռած է, առանց յեղափոխութեան ազգերն ալ գիտկ են, ուստի եւ պարտաւորիչ ամէն ժամանակ և ամէն գործի մէջ յեղափոխական ըլլալ, այս եղած է մեր քարոզը, եւ

այս պիտի ըլլայ մեր ուղղութիւն մինչեւ վերջը:

Ամէն բան կարգ մը ունի, հետեւաբար յեղափոխութիւնն ալ ունի իր դասակարգութիւնը, ինչպէս առաջնութիւն ունի անօթութեան պէտքը քան զկոշիկ, և կոշիկ քան զգլխարկ, նոյնպէս յեղափոխութիւն հարկաւոր է, առաջին աստիճանի մէջ կապանքէ ու կաշկանքէ մէջ աղաւթ անկախ անդ մը ու նենալ, և այդ տեղն է ամենքի համար հայրենիք և մայրենիք ըստ ածերկիլը, զայն ձեռք բերելու համար ամենքի աւագ պարտականութիւնն է, ըլլայ հարուստ, ըլլայ արուեստագէտ և ըլլայ մշակ, ուսեալ թէ անուշ, և այս է ահա սուրբ յեղափոխութեան առաջին պահանջը, որուն պէտք է յարինք ու փարինք անբիծ ու անկեղծ աշխատութեամբ:

Ըստ որում բանական էականք ենք և կը զանազանենք անբան անասուններէն մեր խելքի և հասկացողութեանց առաւելութիւններով, ուստի և հարկաւոր է մեր ընելիք յեղափոխութիւնն ալ պարունակէ իր մէջ բանականի վայել արամաբանութիւն, սահման, չափադատութիւն. մինչեւ ցարդ տեսնուած յեղափոխական ցոյցերուն մէջ չափ չը կար, կշիռ չը կար, որուն դատապարտելի հետեւանքն է որ կը ծանրանայ ամենուս վրայ, պէտք է եւ հարկ մ'է թօթափել այս կաշկանքի ծանրութիւնը մեր վրայէն, խոհեմ, իմաստուն և շրջահայեաց գործառնութեամբ:

Կը մեղադրուի թուրք Սուլթանը թէ՛ բռնութիւն կը բանեցնէ և հետամուտ է հայաջինջ քաղաքականութեան մը: Ինչո՞ւ մեղադրենք զինքը, մարդը իր ազգասիրական յատուկ պարտքն է որ կը կատարէ եւ իր սայթմանով ու սուլթանավթի շահն է որ կուզէ պաշտպանել, բռնական է եւ խելքի ալ մօտ, որ ամեն պահանջներու առջեւ խուլ ըլլայ, ինչու որ փոքր կամ մեծ մաս մը կուզեն անջատել իրմէն, իրաւունք՝ առեղծուած մըն է սա, արկարները բաժին չունին անոր մէջ, իրաւունքը հզօրագոյնին է եւ Սուլ-

թանն ալ հզօր մըն է եւ չը տեսնենք իրմէ գուրս եղած իրաւունքները, դա արդարութեան գործ է, որն որ չը կրնար սուլթանական ապարանքին դռնէն ներս մտնել, ուստի եւ ազատ կը չափէ իր ուզած կանգունով ու կը կշռէ իր ուզած չափով: Դատապարտելի մեղաւորներ ենք մենք հայերս, որ դեռ զերար չենք ճանչար եւ չենք զանազաներ շուրբերողը՝ կուժը կոտորվէն, հայրենասէրը՝ հայրենաւերէն, անկեղծը կեղծաւորէն եւ անձնուէրը դաւաճանէն:

Անմիաբանութեան աղէտները՝ անմիաբանութենէ ծնած ու ծագած դատապարտելի նախճիւնները, մահաւորաբանութեան անբարեկեցութիւնը, մեր աչքերուն առջեւ միաբանութեան ու միութեան գէժ կ'ենենք, եւ զայն վարդապետողներուն հետ կը կրուռուինք, հայրենիք եւ ազատութիւն կ'պոռանք, զաշխարհ խլացնելու չափ աղմուկներ կը հանենք, եւ դեռ չենք գիտեր թէ, ո՞ւր պէտք է գործենք եւ ե՞րբ...:

Բնական է՝ մարդիկ իրենց անյայտ տենչով շատ բաներ, շատ յաջողութիւններ մտքէ կ'անցնեն, սակայն ամենէն պարզելի յաջողութիւնը այն է որ կարելի կ'ըլլայ ձեռք բերել, եւ անոր համար եղած ջանքերը եւ աշխատութիւնները են պատուաւոր եւ արգելաւոր:

Պոլիսը կոստանդնուպոսի մայրաքաղաքն էր եւ սուրբ Սօփիան յոյներու ազօթարանը եւ տաճարը. սակայն այսօր՝ Պոլիսը Սթամպուլ է, եւ սուրբ Սօփիան՝ Ալա Սօփիա ճամբին է. մեզի վիճակակից յոյները Հելլադայի անկիւնները մղեցին իւրենց հայրենիքի ազատութեան մարտը, կուրը: Գարատաղիք չը մուցան իրենց Ձէթինէն, իրենց Շիրգան, եւ պուլկարները Պալքան ներս մէջ գործեցին եւ այսպէս ազատ են այսօր:

Խեղճ հայ յեղափոխականները մոռցան եւ մտքէ իսկ չանցուցին հայկական Չերնագորիսն եւ Տաւրոսեան պալքանները եւ ընտրեցին իրենց ասպարէզ, կաղաման ու Անկուրիան, Տրապիզոնը ու Պէնկան, եւ իրենց տխրահուշակ ճակատաւարութիւնը ըրին պանքայի սրահին մէջ, եւ ահա հետեւանքը այդ կարգի յեղափոխութեան: այս կարգի ազատութիւն:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐՍՊԱՍՏԱՆՈՒՄ
(Շար. 13 թիւն)

Ինչպէս որ պատահում էր ուրիշ տա-
րիներ, նոյնպէս եւ 1897ի ամբողջ
ամբան, Պարսից կառավարութիւն
սահմանադրւի վրայ, իմաստորի մօտ
7000 զօրքերից բաղկացեալ մի բանակ
պատրաստ ունէր, որոնք քանի ամիս-
ներէ ի վեր պահպանում, հսկում էին
անցքերը, ճանապարհները, երեւոյ-
թապէս քիւրդ աշխրհներէ յարձակում-
ներէջ երկիրը գերծ պահելու համար,
բայց մեր կարծիքով գուցէ մի հեռաւոր
գիւտանախորտութեան, քաղաքականու-
թեան ազդեցութեան տակ լինելով,
ստիպուած էր այդ բանակը սահմանա-
գլխում երկար ժամանակ պահել:

Իսկ բանակը պէտք է ասել որ հան-
գիստ ու անուշ մրափում էր Մորֆէի
հեղափոխութեան քան թէ իր դերի մէջն
էր, Պարսից պետութեան միայն ար-
ժանի գիտութիւններ, ուսել ու քննել
աֆիոն կամ թիւրքէք, թէմբէքի, թիւ-
թիւն անագին չիպուի ու գէյլաններով
միշտ պատրաստ ունենալ եւ երկրաւոր
«հիւրիւհիւրներին» վայելելուց յետոյ,
հանդերձեալում երկնաւոր յաւերժահարս
«հիւրիւհիւրներին» ընկողմանի ի
կեանս անվերջանալի հաճոյից...:

Ահա՛, իրենց ամբողջ իտէալը...:
Հրացան, թիւղանօթ, պատերազմ,
վառօղ, սուր, թուր եւ արիւն չի սի-
րում Պարսիկ սարքազ-գիւտութեան զբաղ-
եւ ոչ մէկից չի ախորժում նա. — հիւ-
րիւհիւրի է հարկաւոր նրան — ուրիշ ո-
չի՛նք:

Իմաստորում եղած Մարգիկցիները
որոնց ցեղապետն է Շարաֆ բէգ եւ առ
հասարակ միւս քրդական ցեղերը բոլո-
րովին միամտուել եւ չէին սպասում,
որ սահմանադրութեան այդչափ զօրք եղած
ժամանակ հայ հրոսակները կարողանան
անցնել սահման, որով եւ հարկ եղած
զգուշութիւնները ձեռք չէին առել:

Յուլիս 23ի առաւօտեան (1897) ար-
շաւայից ժամուկէս առաջ Դաշնակցա-
կաններ Արեւելեան եւ Հիւսիսային
կողմերից չրջապատում են Շարաֆ բէգի
միայն 50ի չափ վրանները, եւ անդա-
հար գնդակներ են տեղացնում վրան-
ների վրայ:

Շարաֆ բէգը երկու ծառայ-խորամ-
ներով վրանների ետեւի կողմից յաջո-
ղում է փախչել, երկու ծառաները ընկ-
նում են վազելու ժամանակ, իսկ ինքը
թեւից միայն վերադառնալով աղաւ-
տում է եւ գնում օգնութիւն բերելու
զրացի քրդերէն:

Արշաւախմբի յարձակման ժամանակ,
քրդեր քնած կը լինին եւ մեծաւ մա-
սամբ կին եւ երեխաներ, որոնք կըս-
պանուէին տեղացող գնդակներէ:

Առանց երկարօրէն, ըստ իրենց «Դը-
րօյակ»ի մէջ նկարագրած «Վարդեցիք»ի
«փշրեցիք»ի անալի մանրամասնու-
թեանց մէջը մտնելու գլխաւոր կէտերի
վրայ կանգ առնենք:

Քանի որ գործը քնած մարդկանց
հետ է եղել, Դաշնակցականները ի-
րենց բռնած զէրքերից յաջողում են
գնդակահար անել վրանաւանդներին,
մինչեւ անգամ ձիեր, կովեր, չոռանք
նաեւ երկու հատ կատու, վերջապէս
չատ մը չորքոտաններ սպանուել էին:

Մի քանի հոգի իջնում են գիւրքերից
եւ վրանների մէջն են մտնում ողջ մը-
նացողներին, վերադառնալով վեր-
ջացնելու, պէտք է ասել հէնց առա-
ջին րոպէից շատ չնչին ընդդիմութիւն
կը լինի վրանների մէջ եղողներից, ո-
րովհետեւ կռուողներ քիչ կը լինին:
Մօտաւորապէս 3 ժամ կ'անցնի մինչեւ
որ Շարաֆ բէգ 400ի չափ քրդերի գը-
լուխը անցած օգնութեան կը հասնի:

Մինչեւ այդ ժամանակ շատ հեշտ էր
քնածներին գնդակահարել, ժամանակն
էր որ — իսկական ֆէդայիներ ինչ-
նուիրութեամբ — կուրծք կուրծքի,
ճակատ ճակատի տալով անվերջու-
թեամբ կռուէին թշնամու հետ, քա-
ջերի պէս կռուէին եւ քաջերի պէս էլ
մեռնէին. բայց ա՛խ, ընդհակառակն,
այդ ժամանակ գէպի յետ են խոյս տա-
լիս, չլիտթ, իրարանցումը տիրում է,
անհովիւ ոչխարների նման առանց գե-
կավար-ձեռքերի դէս դէն են վազում:
Խոստովանելի է, առաջին չնչին յա-
ջողութիւններն, բայց եւ այնպէս նա-
հանջը բոլորովին հակապատկերն է...:
Է՛հ, ի՛նչ պէտք կար չնահանջելու,
մնալու եւ հայի քաջութեամբ կռուելու,
մեռնելու, մասնաւորօր որ մի քանի
«ամպածրար» լուրերն յետ գնալով
Պարսկաստանում կը լինէին արդէն ա-
պահով ու հանգիստ...:

Ինչո՞ւ ծածկել մեր թոյլ կողմերը:
Յարձակողական եւ պաշտպանողական
գրութիւն. — Ահա երկու գլխաւոր ու
հիմնական ճիւղեր հայդուկային գոր-
ծունէութեան:

Դեռ 1888 թուականից, երբ սկսեցին
երեւալ Հայ Յեղափոխականների մէջ
հայդուկային թէ՛ Յարձակողական եւ
թէ՛ Պաշտպանողական խմբեր, նոյն իսկ
մինչեւ այժմ, ներկան, կատարուած
ամբողջ հայդուկային գործունէութեանց
իսկական նկարագրութիւնները մեր
աչքի առաջ դնելով, տառնեակ ան-
հրճելի փաստեր ուսումնասիրելուց
յետոյ այն եզրակացութեանը կը յան-
գինք, որ պաշտպանողական գրութեան
մէջ անմասն քաջութեամբ եւ աւելի
անվերջութեամբ կը կռուին եւ յաղ-
թող կը հանդիսանան մեր հայդուկները
քան յարձակողական ճիւղի մէջ. քա-
նիցս պատահած յարձակողական գէպ-
քերը ճշմարիտ վկաններ են մեր ասած-
ների:

Պաշտպանողական գրութեան
միշտ յաջողել է կազմ ու պատրաստ
հայդուկային խումբը, իսկ Յարձակո-
ղական ճիւղի մէջ կամ շատ քիչ է յա-
ջողել կամ երբէ՛ք:

Ինչո՞ւ այդպէս է, հինգ հարիւր տար-
ւայ ճնշման, գերութեան. ուրեմն եւ
պաշտպանողական գրութեան մէջ լի-
նելու հետեւանք չէ՞ արդեօք այդ եր-
կու ճիւղերի իրարմէ ունեցած տար-
բերութիւնը...:

Սոյն կարեւոր կէտերի վրայ ուրիշ
անգամների կը թողուք մեր տեսու-
թիւնները: Խնդրից չչեղինք:

Ինչպէս վերը ըսինք, քրդերի օգնու-
թեան հասած րոպէին, ընդհանուր ի-
րարանցումը տիրում է. ո՛չ խմբապետը
իր դերի մէջն է մնում, ոչ յիմապետն
է յայտնի լինում եւ ոչ էլ պարզ գին-
ուորը: Ամէն հասնողներ գէպի յետ են
գլխում Արաւելուր, եւ այն տեղից ա-
հագին հեռաւորութեան վրայ գնդակներ
են փոխանակում քրդերի հետ:

Տասնեւինը զո՛հ կը մնայ կռուի դաշ-
տում:

Յուլիս 25ի գիշերը 328 հայդուկնե-
րից 170 հոգի միայն մէկ խմբով վե-
րադարձան Պարսկաստան:

Ո՛ւր էին մնացեալները, բացի 19
զոհից, ոչ ոք չգիտէր...: ոչ ոք ի-
րարուց տեղեկութիւն չունէր...:
(Շարունակելի) ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՆԱԽԵ ՄԱՐԴ ԵՍ

Նայէ՛ ինչպէ՛ս անհուն կեանք մը արիւ-
նած,
Կը գալարուի, կը ճմուռի, կը մեռնի՛:
Նայէ՛ ինչպէ՛ս մաղձոտ սիրտեր մթամած
կուլա՛ն լուի, լաց մը անյոյս դաւա՛նի:

Նայէ՛ ինչպէ՛ս մաղաղ կեանքեր լուս
ու յոյս,
Կինսան ամբողջ կարմիր սուրէն քմայքին
Նայէ՛ ինչպէ՛ս մեծ հոգիներ հրայոյդ
կախաղանին, խաչին վրայ կը մեռնին:

Նայէ՛ ինչպէ՛ս ամբոխն ամբողջ, հէգ,
սոգոյն,
Հա՛ց կը պոռայ. աշխատութիւն կամ թէ
հա՛ց,
Ամբո՛խն ամբողջ նիհար, ծթած,
զողոջուն

Դերունդներ, կիներ, տղաքներ սոված:

Եւ այս կարմիր լիւանքէն վերհանրային
եւ այս լուի հրաբուխէն վե՛ր արիւն
Նայէ՛ ինչպէ՛ս հաստ մարդեր ճարպային
իրենց միտին մէջ երջանիկ, մոլորուն:

Պիղծ փայտ մը անհագութեան կ'արձակեն
Այդ ցաւերու ովկանին հրդէն...:
Վարը վիշտ կայ, վերը փայտ կը վառի,
Վարը մերկի՛ վերը հաճոյքը բարի:

Եթէ մա՛րդ ես, մարդ մըն ես, թէ իրա՛ւ
կուրծքէ՛ք ալիք մը բարձրացուր ամբո՛խ
Ձայնէ՛ք սլաք, չեղէ՛ք շանթ մը գոռարշաւ:
Ընդդէմ կարգի, ընդդէմ սուրի ու գահի:

ԱՇՈՏ ԱՇՈՏԱՆ

ՄԵՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Ե.

Եղբայրասպանութիւն... ահա՛
Դաշնակցութեան ներկայ ծրագիրը:
Ո՛վ որ հակառակը պնդելու ըլլայ,
կարող եմ փաստերով հաստատել.
փաստե՛ր, որոնք զարհուրելի եւ մի-
անգամայն պօգալի են:

Յեղափոխութիւնը կարծես թէ
քանի մ'անհասնելու անձնական
իրաւունքն ըլլայ, որոնք զայն պաշա-
պանելու համար ստիպուած են
զրպարտել, հաշտել, խեղդել...
եւ մինչեւ իսկ աղանձել:

Ֆիլիպէի մէջ 4.5 հոգիի համար
է Դաշնակցութիւնը: Եւ որովհետեւ
Դաշնակցութիւնն է անոնց կարծի-
քով միակ յեղափոխական կազմա-
կերպութիւնը, ուստի յեղափոխու-
թիւնն ալ իրենց կը պատկանի...:

Արդ, այդ 4.5 հոգին տեսակ մը
Ճիգերակական ընկերակցութեամբ
կը գործեն: Պատահեցաւ որ հակա-
ռակորդ մի՛նեցան, անմիջապէս
ժողով մը, խաչագողներու խորհրդ-
դակցութիւն մը... եւ յետոյ՝ ու-
րոշա՛ծ են.

1. Ճերմակ տէրօր
2. Կապոյտ տէրօր
3. Սեւ տէրօր
4. Կարմիր տէրօր

Այս չորս սրույնները ժողովը-
րին յայտնի չըլլալուն համար, կու-
գեմ որ քիչչաւ գաղափար մը կազ-
մէ ատոնց վրայ: Ճերմակ տէրօրը
կը գործադրուի, երբոր հակառա-
կորդը բաւական զօրաւոր է եւ կըլ-
նայ իրենց գլխուն փորձանք մը
դառնալ: Այդ պարագային մէջ կը
ջանան անոր բարեկամն ըլլալ, ա-
նոր հետ տեսնուել ու սրտակից ձե-
ւանալ. միւս կողմէն, առանց զգա-
ցնել տալու, անոր նիւթական մի-
ջոցները կապուելու կ'աշխատին եւ
զանի բարոյապէս մեռցնելու յատա-
կագիծ մը կուզեն պատրաստել:

Ստիկա ամենէն պարզ, ամենէն
փափուկ եւ միանգամայն ամենէն
անվնաս միջոցն է (իրենց կարծիքով):
Կապոյտ տէրօրի դերակատարու-
թեան մէջ Դաշնակցութեան ձեռն-
հաս անդամներէն ո՛չ մէկը կ'երեւ-
նայ, այլ բոլորովին միամիտ, ան-
գիտակից ու գլխալի վիճակ ունե-
ցող անձնաւորութիւններ մէջտեղ
կ'ենեն:

Ստոնք կը հալածեն հա-
կառակորդը՝ տարբեր հաշիւներով
ընցուած: Իրար չեն հասկնար. ի-
րարու նկատմամբ անգուլթ կը դառ-
նան, առանց հասկնալու թէ գոր-
ծիք են: Վերջապէս հակառակորդը
կ'ընկճուի. եթէ վաճառականի մը
քով գրագիր է, վաճառ կուտան.
եթէ արուեստաւորի մը խանութը
կը բանի, կրնան հեռացնել. իսկ
եթէ պաշտօնեայ է, վայրկեան մը
չեն թողուր իր հացին վրայ: Ես
խեղճ ուսուցիչ մը գիտեմ, որ Դաշ-
նակցութեան կապոյտ Տէրօրին են
թարկուած է... տակաւին ձայն
ձուն մը չելաւ:

Հոս տեղ կուգեմ յիշատակել այդ
գաւառացի խեղճ ուսուցչի գան-
գառները, որոնք մեր ըսածները
կը հաստատեն: «Դաշնակցական մը
չէի, ըսաւ ինծի ան, այլ այդ կու-
սակցութեան համակիր մըն էի:
Ժամանակ մը յետոյ զղուանք զգա-
ցի այդ կուսակցութեան ըրած խա-
տաւարութիւններէն... ու դադ-
րեցայ համակիր մ'ըլլալէ: Անմեղ
էի եւ չէի գիտել թէ տէրօրները
կային: Սը մը տեսայ որ կը հալած-
ուիմ, կը նախատուիմ... ինչո՞ւ
համար, որովհետեւ Ճիգերակներէն
բաժնուելով, կրնայի անոնց նկատ-
մամբ գէշ խօսիլ, հետեւաբար կան-
խաւ իմ վարկս ուղեր էին կտարել
որ իմ քսածներս կշիւ չունենային:
Ա՛հ, ըրին, վատօրէն ամեն բան
ըրին... նիւթապէս եւ բարոյապէս
սպաննել ու զեցնի գիւս. այսչափ:
Այս բոլորը պատճառ մը ունէր.
Ինչո՞ւ համար Մ..... Կ.....
ու Զ..... ըսուած անձերը Ֆի-
լիպէի վարժարանին մէջ ուսուցիչ
ընելու ամենավատ ցոյցին չէի մաս-
նակից ըլլար...: Ո՛չ ապաքէ՛ն
երկուքն ալ Դաշնակցական էին:
Եթէ վարժուհիին հետ մէկտեղ ըս-
կըսէինք խուփութիւններ հանել,
ինչպէ՛ս կ'առաջարկէին, եթէ ան-
րէնին ու անոր եղբոր դէմ՝ դաւա-
դրութիւններ ընէինք վարժարանին
մէջ, անմիջապէս պիտի յաջողէինք
եւ անոնցը Դաշնակցութեան ձեռքը
կը մնար: Չէ՛, չընդունեցի... չէի
կրնար ընդունիլ, որովհետեւ խիղճ
ունէի...»:

Գալով Սեւ Տէրօրին, ատիկա ա-
մենագաղափարի ոճագործութիւն մըն
է: Եւ որովհետեւ կան ազատ եր-
կիրներ, ուր մարդասպանութիւնը
գլխաւոր է եւ կրնայ վտանգաւոր
հաշիւ մը դառնալ Դաշնակցական
կոմիտէներու գլխին, ուստի Սեւ
Տէրօրը կը նախընտրեն:

Ի՛նչ բան է այդ Սեւ Տէրօրը...
օ՛հ, սուտ տօքիւմէնտներ ունենալ
որոնց մէջ հաստատուած է իրենց

հակառակորդին մասնութիւնը, ա- նոր սեւ արարքներն, անոր դա- տապարտելի գործերը ու ազգա- դաւ գործունէութիւնը. նամակներ ունենալ՝ որոնք կ'ապացուցանեն այդ բոլորը . . . այս է Սեւ Տէրօրը: Այդ պարագային մէջ իրենք մէջ- տեղն են, կը խնդան, դիւային ծի- ծաղ մ'ունին և կարծես հաճոյք մը կը զգան: Պատուական ճգնաւոր- եան և ամենի Զէյթունցի, մի՞թէ դուք ալ Դաշնակցութեան Սեւ Տէ- րօրին չեն թարկուեցաք: Ու այսօր ինչքան ծաղրելի է Գամբը-Արշա- ւիւր մը, որ յեղափոխութեան ա- նունը «Շարժում»-ի հրատարակու- թեան օրէն ի վեր լեզուին վրայ կ'առնէ ու կը փոխէ քանի մը առ- ղերու մէջ, այդ խեղճ գաճաճը ցաւակցական ու հեգնական տողեր ալ կ'աւելցնէր ձեր ամբաստանու- թեանցը հետ: Գուցէ՛ չէք գիտեր ձեր դատապարտութիւնը. ահա՛ լսի, Սեւ Տէրօրին ենթարկուած էք: Բայց կարմիր Տէրօրը . . . ո՛հ, առիկա ա՛յն սարսաղի մարդաս- պանութիւնն է զոր կը գործադրեն խղճի կոտորելու հանդարտու- թեամբ. և անանկ մարդերու ձեռ- քով՝ որոնք սրիկայ կամ միամիտ հայրենասէր մըն են:

Ապագայի պատմութիւնը մեզի շատ մը անմեղ անձնաւորութիւններ ցոյց պիտի տայ, որոնք Դաշնակ- ցութեան տէրօրներուն ենթարկը- ւած են:

Այս գորհուրելի խոտովանու- թիւնն անոր համար ըրինք որ Ֆի- լիպէի մէջ գտնուող 4.5 անձեր գիտնան թէ ոճրագործ, եղբայրա- սպան ու խաչագող պիտի նկատենք զանոնք, եթէ այսուհետեւ շարու- նակեն իրենց ազգագաւ ու վատ արարքները: Այո՛, զանոնք մէկիկ մէկիկ անուում, պաշտօնով, վեր- ջապէս մականունով ալ հրապարա- կելու չի պիտի վախնանք: Ահա՛ մեր կոչը. մեր նպատակը ժողովուրդին ըսել է թէ՛ «Դաշնակցականներուն գրամ մի՛ տաք, Շաքէի կիներուն գրամ մի՛ տաք, և անոնք որ կու- տակցուի եանց համար գրամ կու- ղեն, մի՛ տաք, մինչեւ որ ամենքն ալ միանան և սրբազան միութիւնը կազմուի»: Արդէն, շնորհակալենք որ Շաքէի անդամուհիները կուզեն եղբր Որբախնամ ընկերութիւն մը կազմել և այդ նպատակին ծառա- յել: Այս գեղեցիկ մտածումը ար- տայայտող տիկիներուն բան մը ը- սելիք չունինք: Իրենք մայր են և անչուս մայրեր միայն գիտեն թէ ինչ է այն թշուառութիւնն որուն թեւերուն մէջ կը ճգմուի 4.5 տա- րու մանկիկ մը: Այո՛, կը շնորհա- ւորենք և մանաւանդ երախտա- պարտ ենք որ այդ գործունեայ տիկիները կը հասկնան իրենք ալ թէ կուտակցութեանց ձեռքը գերի ինչալ չէր իրենց նպատակը: Կը յուսանք ու կը սպասենք:

Այսպէս. Ֆիլիպէի կոմիտէն կուզէ կառուի, կուզէ փրփրի, կուզէ կտոր կտոր ըլլայ, նորէն ազատելիք

չունի: Մենք իրեն խորհուրդ կ'ու- տանք որ գործէ քաշուելու ճարը նայի, եթէ ո՛չ յամառելուն պէս, անունով ու մականունով իր արար- քը պիտի հրապարակենք: Վատութիւն է՝ իրեն կ'ըսենք, երբոր «Տաւրոս»-ի ու «Արմէնիա»-ի համար թատրոն մը կը տրուէր, ինքը փէշերը ժողովց ու սեւ օձի մը պէս փողացէ փողոց, տունէ տուն գնաց՝ ըսելով թէ «տոմարկ մի՛ առ- նէք . . . »:

Վատութիւն է, երբոր «Տաւրոս» մի՛ կարդար, կը պօռար ասդին անդին:

Եթէ լուրջ մարմին մը կը նկա- տուի, ա՛յ էր իր լրջութիւնը. բան մը՝ որ թուումստեղծներն անգամ չեն ընել:

Յետոյ վատութիւն է նորէն մար- դիկ խաբէլ և զանոնք Պարսկաս- տան զրկելու խոտովանք ընել . . . ասոնց գէմը կը բողբոքէ:

Նորէն Շարաֆ մը պիտի սպան- նուի, եթէ ո՛չ Մուսան, կը հար- ցնենք: Ո՛վ էք դուք, պարոն ինք- նակոյնք, որ Ֆիլիպէի մէջ գարե- ջուր, համադամ կերակուր եւ . . . սիրուհիներ ունիք, իսկ անդին ալ կը խաբէք խեղճ համալները՝ «Սահ- մանագլուխ գացէք» փոփախով ա- նոնց ականջին: Ո՛ւր պիտի երթան . . . սահմանագլուխ մի՛ . . . արդ- եօ՛ք կատակերպութիւն է խաղցած- նիդ, եթէ ո՛չ դուք տեսակ մը հա- ւատաքնութեան աստեան մը կազ- մած էք:

Ձեր դիմակը վար ըրէ՛ք ու հե- աացէ՛ք, վատ Պետրոս Արպուէզներ, ա՛լ կը պօգտնք ձեզմէ:

Մինչեւ որ Միութիւն չըլլայ, մինչեւ որ Ազգին քուէով վստահի անձեր գործին գլուխը չանցնին, ձեզի իրաւունք արուած չէ խեղճ համալներու կեանքին հետ խաղալու: Մենք ձեզ չենք ճանչնար . . .

Յանուն արդարութեան, յանուն արդարութեան և յանուն յեղափո- խութեան կոչում կ'ընենք մեր գա- ւառացի եղբայրներուն որ կարդան այս տողերը . . . իրենց տեղէն թող չերերան, մինչեւ որ մաքրուին այս աղտոտները:

Ահա՛ կը պօռանք . . . և պիտի պօռանք նաեւ մեր վաճառականին, կղերականին ու արուեստաւորին, որ իրենք ալ ձայնակից ըլլան մեզի:

ԱՆՎՈՂՄԵՆԱՅԱԼ ՄԸ

1898 Մայիս 8
Ֆիլիպէ:

Ս Պ Ա Ն Ի Ա

Քանի որ աշխարհ Արտրատ՝ Սպան—Սմերիկ պատերազմի զը- րոյցներով կ'զբաղի ու կը հետա- քրքրուի, աւելորդ չենք համարեր մենք ալ քանի մը ծանօթութիւններ տալու մեր Պատ. ընթերցողներու, որոնք շատերուն համար գուցէ ան- ծանօթ եղած լինին:

Սպանիա սահմանադրական մի- ապետութիւն մ'է. Հռովմէական

եկեղեցին անոր պաշտօնական եկե- ղեցին է, և թէ կրօնական ու աշ- խարական գործերու մէջ մեծ ազ- դեցութիւն ունի:

Սպանիական լեզուն՝ առանց քե- րականական այլայլութեան կը խօս- ուի թէ Եւրոպա, թէ կեդրոնական և կղզիական Սմերիկայի և թէ բո- լոր հարաւային մասերուն մէջ, ի բաց առեալ Պրագիէան:

Արեւելքի Հրէաները ընդհանրա- պէս սպանիական լեզուն կը գործա- ծեն իրենց կրօնական արարողու- թիւններուն մէջ:

Սպանիոյ ժողովրդեան երկու երրորդ մասը երկրագործու- թեամբ կը պարապի:

Բազմամարդ չէ Սպանիան, 196, 000 քառակուսի տարածութեան վրայ 17,328,000 բնակիչ ունի:

Երկիրը լեռնոտ է, հին պատե- րազմները շատ մարդիկ ջարդած են և շատ ալ Սպանիացիներ Ամերիկա գաղթած են: Կաթօլիկ կրօնքը մեծ հարուած տուած է անոր. հակա- ռակ «աճեցէք և բազմացարուք»-ին երկսեռ բազմաթիւ անձինք վանա- կան կեանքին կը նուիրուին:

Սպանիա 62 թէմերու կը բաժ- նուի և իւրաքանչիւր թէմի գլուխ եպիսկոպոս մը կը նստի կառավա- րութեան ծախքով:

66,000 քահանայ, 1084 աբեղայ և 11592 մայրապետ ունի որոնք կրօնական գործերով միայն կ'զբա- յին:

34,000 հոգիէ զատ միւս բոլորն ալ կաթօլիկ են: 7,000 բողոքական կան որոնք առեւտրական գործով եկած են, Անգլիացի կամ Գերմա- նացի: Շատ մը Հրէաներ ալ բռնի կերպով կրօնափոխ եղած են ու կը բնակին առանձին խումբով Պալա- եան կղզիները:

Համեմատական հաշիւ մը Սպանիոյ եւ Ամերիկայի ծովային ուժերուն:

Առաջին կարգի մարսաւաւթ.— Սմերիկա ունի 4 հատ, Սպանիա 1: Սմերիկա 5 հատ ալ նոր կը շինէ, որ մօտ օրէն կը պատրաստուի:

Երկրորդ կարգի մարսաւաւթ.— Ամերիկա 1, Սպանիա 2:

Չրահարորթ.— Ամերիկա 5, Սպանիա 0:

Յաճառորակ.— Ամերիկա 2, Սպանիա 7:

Պաշտպանուած զրահարորթ.— Ամերիկա 25 պողպատեայ եւ 2 փայտեայ, Սպանիա 7 պողպատեայ, 7 երկաթեայ և 3 հատ ալ փայտ- եայ ունի:

Թօրքիչաւաւեր.— Ամերիկա 11 հատ պատրաստ ունի և 10 հատ ալ նոր կը շինուին: Սպան. 23 հատ պատրաստ և 10 հատ նոր կը շինուին:

Ամերիկայի ամբողջ մարտանաւե- րու թիւն է 90, որոնց 62 ը միայն գործածելի: Սպանիա 60 հատ ունի և 27 միայն գործածելի:

Ամերիկայի բնակչաց թիւն է 75,000,000, իսկ Սպանիայինը 25,000,000:

Եկամուտ.— Ամերիկա 400,000 000 տօլար: Սպանիա 25,000,000: Պարսֆ.— Երկու տէրութեանն ալ հաւասար է, 1,800,000,000:

Վաճառականական արտադրու- քիւնի.— Ամերիկա 5 անգամ ա- լելի Սպանիայէն, ինչպէս և տա- րածութիւնը 10 անգամ աւելի է:

Գուպա՝ տարեկան 200,000,000 տօլարի միայն շաքար և ծխախոտ կ'արտադրէ:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Օրմանեան Պատրիարք իր ամուլ ու դարտակ. յարաբերութիւնները տակաւին կը շարունակէ թուրք կա- ռավարութեան հետ, և Պոլսոյ վարձկան հայ թերթերն ալ իրենց պոռնիկ սինակները կը լեցնեն ա- նոր գլխատանջ երթեւեկութեամբ. Պատրիարքարան իջաւ, պատրիար- քարան չիջաւ. յիմարական լուրե- րով:

Տ. Տիգրան Արփիարեան որ Գա- հրէ է կը գտնուէր, և որ վսեմ: Տիգրան փաշայի տան մէջ վարժա- պետ էր. չը գիտենք ի՞նչ դիտու- մով կամ թագուն միտքով թելա- գրուած է թողուլ բուրքերու հան- գիտ աշխարհը և փութացած է Պոլիս գնալու: Կ'ըսուի թէ՛ իբր պատանդ, բանտը պիտի մնայ, մինչեւ որ իր հարազատը Տ. Ար- փիար Արփիարեան զիջանի Պոլիս վերադառնալու:

Մենք այս անցած դարձածներէն որոշ բան մը չենք հասկնար:

Պարսկաստանէն հասած լուրերը ամենադառն կերպով կը նկարա- գրեն ան տեղի ազգայնոց կացու- թիւնը, հետեւանք խանասորի օժի- ֆիշոսական յայթափութեանց և քուրդ- Շարաֆ պէյի երեւակայական ըս- պանման . . .

Վասպուրականէն և այլ քաղաք- ներէ Պարսկաստան ապաստանած հայերը ան ատենէն սկսեալ, չա- րաշար կը հալածուին ու կը շար- չարուին, շատեր բանտերու մէջ կը հեծեն: Անկուշտ կաշառակերու- թիւնն է որ կ'իշխէ այժմ Արապա- տականի ամեն կողմերը:

Կեցցէ՛ Մէղայի, որի գնտակը փոխանակ քուրդը գտնելու, իր ճգողը ու բզողը կը գալ հայ հա- ռաշանքներով յայտնելու:

Պարսկահայաստանը արին կու- լայ այսօր, շնորհիւ ազգափրկիչ Դաշնակցականներու . . .

Այրի՛ք, հազար ապրի՛ք, Ռու- սահայ եղբայրեր. Ձեր հարիւր հազարաւոր բուրխներով զօրացու- ցէք ու պարարեցէք ֆէդայիները, որպէս զի շուտով գարտակեն Հա- յաստանը: Լաւ գիտցէք որ, թուր- քերը և քուրդերը երախտապարա պիտի մնան ձեզանից:

— Զէյթունէն հասած լուրերն ալ, լարուած գրութիւն մը ցոյց կը տան այն կողմերը, թուրք կառա-

